# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ. (0284)2-25-52
Էլ. փոստ՝ goris.syuniq@mta.gov.am, www.goriscity.am

*05 հոկտեմբեր 2021թ.* N 02/06/03-1740

***ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ***
***ՄԱՐԶՊԵՏ***
***ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ***

Հարգելի պարոն Պողոսյան

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ կետի դրույթների, Ձեզ է առաքվում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործը, ըստ որի նախատեսվում է «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Հարթաշեն բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և որպես առաջնահերթ միջոցառում ներառել պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 0.5հեկտարի (կադաստրային ծածկագիր՝ 09-055-0125-0004-ից) փոխադրումը հատուկնշանակության հողերի կատեգորիա:

Առդիր՝ Էլեկտրոնային նյութ:

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ*** ***ԿԱՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ***

*Կատ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գարեգին Փարսյան*
*gorisqaghkom@mail.ru*

*<u>ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ</u>*

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 30-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման և հաշվի առնելով Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի --------------- N ------դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Հարթաշեն բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխությանը և որպես առաջնահերթ միջոցառում, պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.5 հեկտար, որից վարելահող՝ 0.26136 հեկտար, այլ հողատեսք՝ 0.23864 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-055-0125-0004-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԿԱՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Հարթաշեն բնակավայրի մի հատվածի իրավիճակային հատակագիծ

Մ 1:25000



Հաստատում եմ՝
Գորիս համայնքի ղեկավար
**Ա. Առուշանյան**
«____» ____________2021 թ.

# ՀԱՏԱԿԱԳԻԾ

## Գորիս համայնքի Հարթաշեն բնակավայրում հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրվող 0.5 հա տարածքի

Մ 1:10000

| | X | Y |
|---|---|---|
| 1 | 8620203.5230 | 4371677.6015 |
| 2 | 8620163.4728 | 4371730.6317 |
| 3 | 8620194.5684 | 4371748.8347 |
| 4 | 8620216.8060 | 4371764.9420 |
| 5 | 8620229.7193 | 4371775.0244 |
| 6 | 8620267.6231 | 4371732.1570 |
| 7 | 8620237.0630 | 4371704.8352 |






## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

թեքություն

անտառ

ծառ

**Ծանոթություն**

1սմ.-ում 5մ
հորիզոնականների անկումը 0.5մ
կոորդինատական համակարգը ARMWGS
բարձրությունը Բալթիական

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - |
| գեոդեզիստ | Ռ.Հովհաննիսյան | | | |

| | փուլ | թերթ | թերթեր |
|---|---|---|---|
| համայնք Հարթաշեն | ԱՆ | 1 | 1 |
| Գեոդեզիական հանույթ Մ 1:500 | <<ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ>> ՓԲԸ Երևան 2021թ. | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

3201,Սյունիքի մարզ, ք. Գորիս, Անկախության 3, հեռ. 2-25-52, ֆաքս 2-25-53

### ԿԱՐԾԻՔ
### Հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ

ՀՀ հարավ-արևելյան սահմանի անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Հարթաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության վարելահողերից 0.26136 հեկտարի, այլ հողատեսքերից 0.23864 հեկտարի նպատակային նշանակությունը:

Այդ նպատակով «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Հարթաշեն բնակավայրի համակցված փաստաթղթում նախատեսվում է փոփոխություն և որպես առաջնահերթ միջոցառում ներառվում է  պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող հողերից ***0.5*** հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-055-0125-0004-hg) փոխադրումը հատուկ նշանակության հողերի կատեգորիա:

Կարևորելով սահմանների անվտանգության ապահովումը, հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով կազմված հողաշինարարական գործին տալիս ենք ***դրական*** կարծիք:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Կարեն Քոչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

3201,Սյունիքի մարզ, ք. Գորիս, Անկախության 3, հեռ. 2-25-52, ֆաքս 2-25-53


«06» 10 2021թ. N 02/06-1087

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Հարթաշեն բնակավայր) վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-055-0125-0004-ից) հատուկ նշանակության հողերի կատեգորիա՝ պաշտպանական կարիքների համար փոխադրվող 0.5 հեկտար հողատարածքը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում: Հողամասի հարևանությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ չկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատ. քաղշին և կոմտնտ
բաժնի պետ՝ Գ.Փարսյան
հեռ. 2-56-96

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«30» 08 2021 թ. №20/1937

**ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար**
**պարոն**
**Ա. Հարությունյանին**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 053-53610
«30» 08 2021 թ.

**Հարգելի պարոն Հարությունյան**

ՀՀ պետական սահմանի Սյունիքի արևելյան հատվածի պահպանության ամրապնդման նպատակով, ՀՀ ԱԱԾ 08.02.2021 թ. N 20/100 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին, խնդրելով ՀՀ վարչապետի հանձնարարականը ՀՀ ԱԱԾ-ի, գյուղական և համայնքային աշխատակիցների մասնակցությամբ ուսումնասիրված և ընտրված 8 հողատարածը հատկացնել ՀՀ ԱԱԾ-ին սահմանապահ ուղեկալներ կառուցելու համար:

Նշված 8 հողատարածքից 5-ը ՀՀ կառավարության որոշմամբ ամրացվել է ՀՀ ԱԱԾ-ին, 2-ի մասով /Ճակատեն և Ագարակ գյուղեր/ առկա է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, իսկ 1-ի վերաբերյալ /գյուղ Որոտան/ փաստաթղթային ձևակերպման գործընթացը շարունակվում է:

Տեղեկացնում եմ նաև, որ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Հարթաշեն, 2 առանձին հողակտոր Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ և Տեղ համայնքի Կոռնիձոր գյուղերի 56 կմ հատվածի պահպանությունն ու պաշտպանությունը նույնպես պետք է իրականացնեն ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերը:

ՀՀ ԱԱԾ-ի և համայնքների աշխատակիցների կողմից ուսումնասիրված և ընտրված վերը նշված 4 համայնքի 5000-ական քմ 5 հողատարածքների հատկացման փաստաթղթերի ձևակերպումների գործընթացը սկսելու համար, ըստ համայնքի ղեկավարների անհրաժեշտ է համապատասխան հանձնարարական:

Տեղեկացնելով վերոգրյալը, խնդրում եմ ՀՀ վարչապետի հանձնարարականը պետական մարմիններին /ՏԿԵՆ/, աջակցել նոր 5 հողատարածքի հատկացման և նախկին հանձնարարականով 3 հողատարածքի տրամադրման հարցերում:

**Հարգանքով՝**

**Ա. Աբազյան**

0301